4.qxd 26/05/2020 17:10 Page 1

ԻՆՉՊԻՍԻ ՍԵՐՄ ՑԱՆԵՍ, ԱՅՆ ԷԼ ԿՍՏԱՆԱՍ

1+1



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԹԵՐԹ ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ 2020 թ. թիվ 4-5 (14-15)

ԻԳՈՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ



Արցախի ազատագրական շարժման առաջնորդներից, կազմակերչպիչներից ու քաջալերողներից մեկը հայ ժողովրդի պանծալի զավակ Իգոր Մուրադյանն էր:

Նա ծնվել է 1957 թվականի ապրիլի 29-ին, Ուկրաինական ԽՍՀ Օդեսա քաղաքում: Մեծացել է Բաքվում: Ավարտել է Մոսկվայի Պլեխանովի անվան գյուղատնտեսական ինստիտուտի արդյունաբերական ֆակուլտետը: Իգոր Մուրադյանը նախաձեռնել է, «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը: Կազմակերպության ղեկավարը Ղարաբաղյան շարժման և, «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիր Իգոր Մուրադյանն էր, ով ահռելի դերակատարություն ունեցավ Ղարաբաղյան շարժման ընդհատակյա փուլի նախապատրաստման, ապա Ղարաբաղյան շարժման առաջին ամիսների հանրահավաքների, ցույցերի, գործադուլների կազմակերպման և «Ղարաբաղ» կոմիտեի կազմավորման գործում: Որպես ՀԽՍՀ պետպլանին կից էկոնոմիկայի և պլանավորման ինստիտուտի հատուկ տնտեսագիտական հետազոտությունների բաժնի ավագ գիտաշխատող՝ 1985 թվականից նա համակարգում էր Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթներ կազմելու և ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին ներկայացնելու աշխատանքները: 1988 թվականի մայիսին թողել է Կոմիտեի կառավարման գործը: 1990-1995 թվականներին ընտրվել է ՀՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր, ԳԽ Պաշտպանության և ներքին գործերի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:2009-2013 թվականներին եղել է «Իրատես դե ֆակտո» թերթի քաղաքական վերլուծաբանը: Իգոր Մուրադյանը մահացել է 2018 թվականի հունիսի 17-ին, Երևանում, երկարատև հիվանդությունից:

Մանվել Սարգսյանը հիշեց, թե ինչպես էր Իգոր Մուրադյանը ամբողջ Խորհրդային Միությունով մեկ տանում բացատրական աշխատանքներ, որպեսզի Ղարաբաղյան խնդիրը երկրում դառնա քաղաքական խնդիր: Ըստ պարոն Սարգսյանի՝ Իգոր Մուրադյանի համար դա էր գերխնդիրը: Մեր հարցին՝ հնարավո՞ր է Ղարաբաղյան շարժումն այս մասշտաբներն ու ընթացքը չունենար, եթե նրա ակունքներում Իգոր Մուրադյանը չլիներ, պարոն Սարգսյանն արձագանքեց, 1987-ին, երբ կային արդեն նախադրյալները, Իգորը եկել էր Արցախ, բոլորին սկսել էր կոնսոլիդացնել, նրան բոլորը ճանաչում էին: Նա մտածում էր, որ պահն է. այդ տեսանկյունից հմուտ և շատ ադեկվատ գնահատական ունեցող մարդ էր, կարողացել էր բոլորին համոզել և, ի վերջո, այդ ամենը հանգեցնել շարժման: Միանշանակ նրա դերն առանձնահատուկ էր: Թեև պարոն Սարգսյանը փաստեց, որ ժամանակին շարժումը հասունացել էր, բայց միևնույն ժամանակ շեշտեց՝ պարոն Մուրադյանի առանձնահատկությունն այն էր, որ նա առաջարկեց հատուկ մեթոդոլոգիա. «Իգորն առաջարկել է այն ժամանակվա համար անհասկանալի, բայց հետագայում իր կենսունակությունն ապացուցած մոտեցում: Ըստ այդ մեթոդոլոգիայի՝ պետք է աշխատել պերեստրոյկայի դրոշի տակ և բացարձակ սահմանադրական շարժում ծավալել. տոտալիտար երկրում չէր ընդունում փակ շարժումը: Կարևոր էր, որ մոտեցումն իրեն արդարացրեց: Նա տանում էր այն գիծը, որ ժողովրդի խախտված իրավունքները վերականգնվեն, այս սկզբունքները դաստիարակում էին թե՛ սովետական իշխանություններին, թե՛ հանրությանը: Հանրությունը հավատալով, որ դա իր իրավունքն է, հզոր կազմակերպվածություն ցուցաբերեց: Առաջին անգամ ժողովուրդը հասկացավ սահմանադրական շարժման էությունը: Համաժողովրդական իրավական մեխանիզմներ. սա մեթոդաբանություն էր, որը պիտի բերեր շարժման երկրորդ փուլին՝ 1988-ի փետրվարին, երբ խորհրդային իշխանությունները հրաժարվեցին ժողովրդի պահանջը կատարել, և ժողովուրդն անցավ խաղաղ անհնազանդության: Այն, ինչ տեսանք վերջին ամիսներին, Հայաստանում առաջին անգամ կիրառվել է հենց փետրվարի 20-ից հետո, երբ ժողովրդական անհնազանդությունը սկսվեց, և դժվար էր պատկերացնել, որ ժողովուրդը կարող էր Սովետական Միության բարձր իշխանությունների որոշումը չընդունել: Դա էլ ենք անցել»: Պարոն Սարգսյանից հետաքրքրվեցինք, թե ինչպիսի՞ն էր Իգոր Մուրադյանը որպես ընկեր, անհատ: Նա պատասխանեց. «Լինում են մարդիկ, որոնք ամբողջ կյանքն են տալիս գործին: Իգոր Մուրադյանն իր կյանքով դա ապացուցեց: Նա անգամ ընտանիք չի կազմել, մինչև կյանքի վերջը նվիրվել է գործին. սա բացառիկ երևույթ է: Շատերը չեն էլ հավատում, որ նման մարդիկ կարող են լինել: Նա ապացուցեց, որ, այո՜, կան մարդիկ, ովքեր ամբողջ կյանք են տալիս գործին»: Մանվել Սարգսյանը Իգոր Մուրադյանին բնութագրեց որպես կոմպրոմիս չընդունող մարդ. «Բացարձակապես վախի զգացողություն այդ մարդու մեջ չկար: Օրեր եմ հիշում, որ մինչև շարժումը կոտրվում էին մարդիկ, վախենում էին հրեշավոր համակարգից, Իգորն ասում էր՝ հանգիստ եղեք, ո՞վ են նրանք, մենք ստիպելու ենք սրանց: Մտերիմներից մեկը, որը պաշտոնյա էր և Իգորի հետ աշխատում էր, ասում էր՝ դու չես հասկանում, որ վատ է լինելու, մի՜ արեք: Իգորն այդ մարդուն հարցրել է՝ ո՞նց եք որոշել, որ վատ է լինելու, այդ մարդն ասել է՝ իմ կյանքի փորձից դա գիտեմ: Իգորն արձագանքել է՝ ինչ լավ է, որ ես ձեր կյանքի փորձը չունեմ»: Մանվել Սարգսյանը փաստեց՝ շատ մոտ են եղել Իգոր Մուրադյանի հետ, հիմնել են «Ղարաբաղ» կոմիտեն: Հետադարձ հայացք նետելով անցյալին՝ պարոն Սարգսյանը հիշեց՝ Իգորը ոչ մի բանի առաջ չէր կանգնում, կապ չունի՝ ինչ էր կատարվում, նրան հետաքրքրում էր միայն այն, որ կա խնդիր, և այն լուծել է պետք: Ըստ պարոն Սարգսյանի՝ հենց այս պատճառով էլ Իգոր Մուրադյանն անփոխարինելի է, թեև կային ուրիշ տղաներ էլ:

/շարունակությունը՝ էջ 2-ում/

ԻԳՈՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Այդպիսիք էին Էմիլ Աբրահամյանը, Արթուր Մկրտչյանը, հետո Լեոնիդ Ազգալդյանը. «Մասշտաբի հարց է. մարդ, ով կարող է մեկ միլիոն մարդ համոզել, ամեն մեկը չի կարող: Իր խարիզման մարդկանց համոզում էր, անվախ և որևէ բանի առաջ չկանգնող էր, որևէ պատճառ չգտնող էր: Նման մարդիկ քիչ են: Ասում են՝ նրա պապն ու նախապապը սովետական առաջին հեղափոխական գործիչներից էին: Դա էլ է ազդում: Գրքերով մեծանում էր: Իգոր Մուրադյանը մարդ էր, որն ամբողջ այդ խնդիրը դրել է Խորհրդային Միությունում, ինքս էլ եմ հիշում. բազմաթիվ ծանոթ մարդիկ մեզ գալիս ասում էին, թե հիմարություններով եք զբաղվում, հասկանո՞ւմ եք՝ սա հրեշավոր պետություն է, ԿԳԲ է, Սահմանադրությունը, սահմանադրական շարժումը, պատգամավորը ո՞րն է:

Մարդիկ ուրիշ աշխարհում էին ապրում: Ինքն էլ, մենք բոլորս էլ քմծիծաղ էինք տալիս, ասում էինք՝ այս մարդիկ անցյալից եկածներ են: Երբեք նման մասշտաբի փոփոխությունները, շարժումները պատահական չեն լինում: Դրանք շարժումներ են, որոնց դեմ խաղ չկա, եթե դա լինում է, լինում է»: Համեմատելով ապրիլյան դեպքերի հետ՝ պարոն Սարգսյանն ասաց. «Դրա ավելի փոքր տեսակն ապրիլին ՀՀ-ում տեսանք: Նույնպես տեսանք, թե ինչպես փլուզվեց այդ մարդակեր համակարգը. բոլորն ասում էին՝ անհնար է, ձև չկա, միայն զենքով: Բայց ժողովուրդը դուրս եկավ և ասաց՝ այդպես չէ, այսպես է, ու բոլորին ապացուցեց, որ ոչ ոք ոչինչ անել չի կարող»: Սակայն պարոն Սարգսյանը նեղսրտած է՝ այս իշխանություններն էլ չկարողացան իրենց մեջ վախը հաղթահարել և ներկայացնել հերոսի մահը ինչպես որ պետք է. «Այդ մասշտաբի մարդուն ինչպես են մոտեցել, երբ մահացավ: Ղեկավարությունը եկավ, պետությունը թաղման ծախսերը վերցրեց իր վրա, Իգորը Եռաբլուրում թաղվեց, բայց այնպիսի անհայտ ձևով, որ դուրս մնաց ինֆորմացիոն դաշտից, այնպիսի տպավորություն է, որ կարծես վախենում էին ներկայացնել հերոսի անցած ճանապարհը՝ ոնց որ պետքն է»:

Իգոր Մուրադյանը մատնանշում էր, որ մենք ունենք ստրուկի մտածելակերպ, և մեր գաղափարախոսությունը չի կարողանում ազատվել դրանից: Եվ մեր ամենամեծ դժբախտությունը այն է, որ մինչ օրս համբուրում ենք այն ձեռքը, որը մեզ խեղդում է: Մինչդեռ պետք է սովորենք ապրել ու պայքարել Իգոր Մուրադյանի նման:

«1+1» դպրոցական թերթի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Շուշիի ազատագրման և Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի օրվա առթիվ:

ԶԻՆՎՈՐԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ

Առավոտյան զարթնել էինք քնից, բանից տեղյակ չլինելով՝ նայում էինք իրար երեսի և չէինք հասկանում՝ ինչ կրակոցներ են մեզանից մի քանի կիլոմետր հեռու: Խառնաշփոթ էր. մի քանի ժամից նոր իմացանք, որ ադրբեջանցիները հարձակվել են մեզ վրա: Բոլորս առանց խոսքի նայում էինք իրար՝ կարծես պատասխանը փնտրելով այդ լռության մեջ. այդպես չպետք է լիներ...

Անցան տարիներ: Ես շատ անգամ եմ ինձ տվել այդ հարցը, թե ինչպես պատահեց, որ պատերազմում հաղթած երկիրը նստած սպասում է, որ իր բախտը պետք է ուրիշները որոշեն, ի՞նչ եղավ մեզ հետ:

Ես արդեն հոգնել եմ այն դատարկ «կենացներից», երբ երեկոյան քեզ գովաբանում են, իսկ առավոտը բարև չեն տալիս կամ ուղորդվում են ֆանտաստիկ, ոչ ճշգրտված պատկերացումներով՝ պետական անվտանգության և պետության կայացման հարցում:

90-ականներին մենք թե՛ մշակութային, թե՛ գիտական մակարդակով առաջ էինք: Իմ մեջ արթնացավ ցանկություն՝ ուսումնասիրել Հայաստանի Առաջին հանրապետության պատմությունը:

Չեք պատկերացնում, ոչ գիտական մտածելակերպով կարող եմ ասել, որ մենք համարյա հետևություն չենք արել այս վերջին 100 տարվա պատմությունից :Ես ապրել եմ օտար երկրում շատ երկար՝ ոչ այդքան բարեկեցիկ կյանքով: Ես մանկությունից գիտեմ, որ ոչ մեկի վրա հույս դնել չի կարելի, ամեն մարդու հույսը ինքն ու իր արարքն են, իսկ պետության ապագան իր ազգաբնակչությունն է, գիտակցությունն է, վճռականությունը, ապագայի մասին պատկերացումը և պատասխանատվության զգացումը:

Մենք՝ հայերս, շատ ենք սահմանափակվում մեր անձնականով, շատ նեղ է մեր պատկերացումը մարդ-պետություն հարաբերության մեջ:

Ես հիմա աշխատում եմ որպես առաքիչ, կզարմանաք, եթե ասեմ, որ ես՝ դպրոցը հազիվ ավարտած տղա, պակաս գիտելիքներ չունեմ, քան ինձ հետ աշխատող բարձրագույն կրթություն ստացածը: Մենք վատնում ենք պետական բյուջեն՝ գործ տալով հարյուրավոր ոչ բանիմաց գիտելիքներով դասախոսների և կյանք ենք ուղարկում գիտելիքներից հեռու մեծ թվով ուսանողներ: Ժամանակն է, որ հետևություններ անենք մեր անցյալից և թույլ չտանք նույն սխալները: Ես իմ խորին ցավակցությունն եմ հայտնում այն հերոսների հարազատներին, որոնց շնորհիվ մենք ապրում ենք, խոնարհվում եմ մեր բանակի միջին և ցածր սպայական կազմի առջև, որոնց շնորհիվ հպարտանում ենք այսօր:

Հուսով եմ, որ մեր պետական մարմինները արդեն ճիշտ հետևություններ կանեն: Իսկ ինչ վերաբերվում է ինձ, ես օրինապաշտ զինվոր եմ:

Քառօրյա պատերազմի մասնակից՝
Սամվել Հարոյան

ԻՆՉ Է ԲԱՄԲԱՍԱՆՔԸ

Բամբասանքը ծնվում է այնտեղ, որտեղ կա նախանձ ու շահ: Իսկ նախանձը իր հերթին ծնում է վրեժխնդրություն և փորձում է պատճառել որևէ ցավ ոչ թե իր շահի համար, այլ առաջադեմ մարդկանց այն բանի համար, որ նրանք խելոք են, լավն են, առաջադեմ են: Բամբասողները կարող են դառնալ մոլագարներ, որոնք տանջվում են և ի վերջո հիվանդանում հոգեբանական կամ տարբեր վատ հիվանդություններով:

Դրա համար բամբասանքն այդքան էլ անմեղ չէ: Ո՞րն է տարբերությունը բամբասանքի ու լուրի մեջ: Լուրը վերաբերում է բոլորին, դրա համար այն համատարած է: Բամբասանքը վերաբերում է քչերին, իսկ քչերը հետաքրքրում են շատերին: Ինչպես լուրը, այնպես էլ բամբասանքը բավարարում է որոշակի ինֆորմացիոն /տեղեկատվական/ կարիք մարդկանց մոտ, բամբասանքը ավելի շատ ապատեղեկատվություն է, որի մասին չի կարելի գրել: Որպես կանոն, բամբասանքը փոխանցվում է որպես գաղտնիք: Այդ երևույթը բամբասողների մեջ առաջացնում է զգացմունք, որ իրենք պատկանում են նույն համախոհների շրջապատին:

Ըստ լսողների ցանկության բավարարման՝ բամբասանքը բաժանվում է վեց խմբի՝

1. Տեղեկատվական- ճանաչողական ֆունկցիա, երբ մարդը բախվում է կոնկրետ բամբասանքի հետ, ճշմարիտ տեղեկատվության զգացմունքը վերանում է, և նա գնում է բամբասանքի ուղղությամբ:

2. Ինտեգրման ֆունկցիա, երբ բամբասանքի փոխանակումը ասում է այն մասին, որ այդ մարդիկ ունեն միանման բնավորություն և հոգևոր արժեքներ: Բամբասանքը լուր չէ, որ կարող ես կիսվել ուրիշի հետ: Բամբասողները ունեն իրենց խումբը:

3. Զվարճական խաղային ֆունկցիա,երբ լուրը ընդունվում և փոխանցվում է ինչպես ճշմարտություն, բամբասանքը տարածվում է հանգիստ, ինչպես հեգնական կատակ /իրոնիա/:

4. Նախագծում և փոխհատուցողական ֆունկցիա, երբ համարյա բոլոր բամբասանքները, նույնիսկ եթե դրանք ճշմարտության հետ աղերս ունեն, հորինված տեղեկատվություն են: Բամբասանքը կարող է փոխել ժանրը: Ոչ ճշմարիտ տեղեկատվությունը փոխանցվելով որպես «գաղտնիք»՝ դրանք հայտնվում են թերթում, և կարդացողը այդ բամբասանքը ընդունում է որպես ճշմարտություն:

5. Սոցիալական հսկողական ֆունկցիա, երբ բամբասանքը հասարակության կարծիքն է՝ փակ տեղեկատվություն, դա հակասողական ֆունկցիա է զանգվածների կողմից էլիտայի վրա:

6. Մարտավարական ֆունկցիա, երբ բամբասանքը օգտագործվում է որպես յուրահատուկ զենք քաղաքական և հասարակական խմբերի կողմից իրար դեմ: Միայն այն, որ ձեր մասին բամբասանք են տարածում, երբեք չի կարելի բացատրություն տալ:

Բամբասողը արժևորում է մարդու արարքը, դրական արարքը մերժվում է, բայց բացասականը բազմապատկվում է: Մարդուն պետք է, որ ինչ-որ մեկին պատմի, կիսվի իր ուրախության և խնդիրների մասին, ձգտում է մոտիկության, ջերմության, փնտրում է զգացմունքային աջակցություն: Հենց այդ թուլությունից էլ օգտվում են բամբասողները: Մարդիկ, որոնք քննադատում են մարդուն, փորձում են նրան նվաստացնել ծանոթների աչքերում, դրա պատճառը այն է, որ բամբասողները նախանձում են այդ մարդուն: Իսկ նախանձը առաջ է գալիս այն դեպքում, երբ դու կայացած չես որպես մարդ և վստահ չես քեզ վրա:

ՏԱՆԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԸ

Յուրաքանչյուր բնագավառում մարդը աշխատելու ընթացքում ունենում է դժվարություններ: Երբ որ մենք սովորում ենք, միշտ չէ, որ հասկանում ենք նյութը, երբ աշխատում ենք, միշտ չէ, որ հասկանում ենք՝ ինչ են ուզում մեզանից: Դրա համար մարդու մեջ առաջ է գալիս ներքին կոնֆլիկտ՝ «ուզում եմ» և «պետք է»: Այսօր մենք պետք է մնանք տանը, ուզում ենք, թե՝ ոչ, դրանից է կախված մեր և մեր հարազատների առողջությունը: Լավ է, որ կա մի անկյուն, որտեղ դու կարող ես մեկուսանալ, բայց հիմնականում այդ հնարավորությունը քչերը ունեն: Հարցրեք ձեզ, ինչքանով է փոխվել ձեր կյանքը արտակարգ իրավիճակում / մի՛ շտապեք/: Տանը նստելով՝ մարդը դառնում է ագրեսիվ, իրար հետ խոսելը դառնում է բարդ, և միշտ գտնվել մի հարկի տակ՝ դառնում է անտանելի: Բայց ցավոք, այսօրվա մարտահրավերները այնպիսին են, որ ոչ մի բան չենք կարող փոխել: Արտակարգ իրավիճակում գտնվելը զայրույթ է առաջացնում: Շատ մարդիկ կարող են բացառել, որ իրենց մոտ դա կա, դա նորմալ է, քանի որ զայրույթը սոցիալապես անընդունելի է: Զայրույթը կարելի է ուղղել մի ուրիշ հունով: Շատերը կուզենան մեկին սպանել, ուտել, մասերի կտրտել, բայց քրեական օրենքը շատ է խանգարում. ի՞նչ անել: Գյուղացու համար ամենացավոտ փորձությունը աշխատելն է իր սեփական հողամասում և անասնաբուծությունը զարգացնելը: Հոգեբաններն ասում են, որ զայրույթը մի էներգիա է, որը պետք է դուրս թողել մարմնից: Ֆիզիկական աշխատանքը միջոց է դուրս թողելու այդ էներգիան: Ստեղծագործ մարդկանց համար այդ հնարավորությունները ավելի շատ են/ նվագեք, նկարեք, երգեք, գոռացեք/, իսկ եթե մենք ծույլիկ ենք և ոչ մի բան չենք ուզում անել, վերցրեք տետրի թերթ և վրան գրեք՝ ինչն է ձեզ նյարդայնացնում, եղեք ձեր հանդեպ արդար, գրեք ամեն ինչ, հետո եթե կուզեք, պատռեք կամ վառեք, կամ էլ ճմռթեք թուղթը ու խփեք պատին մի քանի անգամ: Աստված չանի, որ արտակարգ իրավիճակը երկարացնեն, բայց եթե այդ տեղի ունենա, մենք կքննարկենք ուրիշ դեպքեր:

Հոգեբան-խորհրդատու
Արմինե Հայրապետյան

4.qxd 26/05/2020 17:10 Page 3

ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ՄԱՐԴԸ

Գեղեցիկ արևային օր էր. ես, եղանակին համապատասխան հագնված, մեր դպրոցի թերթերից մի քանիսը ձեռքիս, գնում էի Հեներ պապիկի տուն. նա շատ լավ դիմավորեց ինձ: Մենք ծանոթացանք, և սկսվեց հետաքրքիր և անկեղծ զրույց: Հեներ պապը մեր գյուղի տարեց մարդկանցից մեկն է, նա 80 տարեկան է, և այդ մասին խոսում է հպարտությամբ: Նա պատմեց իր կյանքի դժվարությունների, լավ ու վատ օրերի մասին: Նա ծնվել է 1941թ. սեպտեմբերի 1 –ին: Նրա ծնվելուց մի քանի օր հետո հայրը մեկնում է պատերազմ: Այդ օրվանից մայրը իր երեխայի համար կատարում է հոր և մոր դերը: Հեներ պապը, ինչպես գյուղի մյուս իր հասակակիցները, կրթություն ստացել են գյուղի միջնակարգ դպրոցում: Ծառայել է Խորհրդային բանակում: Ծառայությունն ավարտելուց հետո վերադարձել է հայրենի գյուղ և զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով: Կազմել է ամուր ընտանիք: Իրեն համարում

է հայրենասեր: Երբեք չի վախեցել ոչ մի տեսակի աշխատանքից, ասում է, որ աշխատանքն է ազնվացնում մարդուն: Մարդը իր աշխատասիրությամբ և ունակությամբ միայն կարող է հասարակության մեջ տեղ ունենալ:

Հեներ պապը խոսեց իր երազանքների մասին: Ամենակարևոր երազանքը կապված է թոռների և ծոռների հետ: Ձանք չի խնայում, որ նրանց դաստիարակի հայեցի ոգով, որ երբեք չմոռանան իրենց արմատները:

Նա միշտ խորհուրդ է տալիս, որ պետք է ապրել ուրիշի ցավով և ուրախանալ ուրիշի ուրախությամբ և միշտ պետք է լինել կամեցող: Նա հիացմունքով էր պատմում գյուղի կյանքի մասին և ասում, որ պետության հիմքը գյուղացին ու իր ստեղծածն են: Պատմում էր, թե ինչպես են մեծահասակները հավաքվում, զրուցում, բանավեճի բռնվում, քննարկում պետության մեջ կատարվող անցուդարձը և, իհարկե, նարդի խաղում:

Հեներ պապը նշեց, որ հիմա դժվար ժամանակներ են: Խոսեց ներկա կառավարության և վարչապետի մասին, նշեց, որ իրեն դուր է գալիս այն, ինչի մասին որ խոսում են, բայց որպես լեռնեցի՝ չի հասկանում այդ «մուկ ու կատու» խաղը:

-Գյուղում զբաղվում ենք հողագործությամբ և անասնապահությամբ և դրանցով ապահովում մեր գոյությունը, սակայն առողջությունը ամենաթանկ բանն է,- ասում է նա:

Ճիշտ է , Հեներ պապը որոշակի առողջական խնդիրներ ունի, բայց լավատես է.

-Ես քիչ չեմ ապրել, իհարկե, եղել են և՝ լավ, և՝ վատ օրեր, դրանք կյանքին տալիս են երանգներ և քաղցրություն, կուզենամ, որ մեր դպրոցականները լավ սովորեն, որպեսզի մենք կարողանանք հպարտանալ նրանց ստեղծած արդյունքներով, լինեն պրոֆեսիոնալ իրենց գործում և միշտ հիշեն՝ ովքեր են իրենք,- մեր զրույցը եզրափակեց մեր գյուղի ամենատարեց մարդը:

Արփինե Մխիթարյան

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ, ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲ

Նորից գարուն...

Միայն այդ բառն արտաբերելիս կարելի է խենթի պես ժպտալ...

Գարուն.. Այն ապրեցնում է մեզ, թևեր է տալիս, նոր հույս, ապրելու ու ծաղկելու ձգտում: Այն ասես հմուտ նկարիչ լինի, ով իր վրձնի մի հարվածով կանաչեցնում է աշխարհը, իսկ ամենաբարակ վրձնով արևի դեղին շողերն է նկարում: Ծաղիկների ու դաշտերի նման ասես մեր սրտերն էլ են ծաղկել: Գարնանային երեք ամիսները ստեղծելու, արարելու ամիսներ են: Թեև հիմա դժվար ժամանակներ են, բայց դրանք չեն խանգարում գյուղացուն իր գործն անելու համար: Շուտով մեզ մոտ կսկսվի վար ու ցանքը: Չէ՞ որ հողը սպասում է ձեռքի, որպեսզի նորից արարի, ստեղծի ու կյանք տա:

Եվ ինչպես ասել է Եղիշե Չարենցը՝ «էլի գարուն կգա, կբացվի վարդը»: Ինչու՞ միայն վարդը, շուտով բոլոր ծաղիկներն էլ կբացվեն ու իրենց արբեցնող բուրմունքով կստիպեն մեզ՝ խենթանալ իրենցով ու կապրեցնեն մեզ...

Կծաղկեն ծառերը, կծաղկեն մեր հոգիները: Կվերակենդանանա բնությունը, դաշտերը նորից շքեղաշուք, կանաչ զգեստ կհագնեն, ծառերը՝ սպիտակ ու վարդագույն, երկնքի լաջվարդն էլ ավելի կգեղեցկանա...

Իսկ եթե երբեմն էլ ձյուն է տեղում, միևնույն է, եթե հոգումդ մի կտոր արև կա, կարող ես հալեցնել ձյունն ու հավերժական գարուն բերել:

Գարունն ասես հրաշագործ լինի, այն սեր է քարոզում ամենուրեք ու մարդկանց դեմքերին արևի պես շողշողուն ժպիտներ նկարում:

Իսկ առավոտը հաճելի է, երբ լավագույն զարթուցիչը սենյակիդ պատուհանից ներս թափանցող արևի պայծառ շողքն է:

Կարծում եմ՝ գարունը մենք համեմատաբար ավելի երջանիկ ենք զգում մեզ: Իհարկե, երջանկությունը սահմանում չունի, բայց երբ ինչ-որ բան ունես, որը քեզ արթնանալ է ստիպում, ի՞նչ է դա, եթե ոչ երջանկություն: Կարծես արթնանում ենք ոչ միայն ձմեռային քնից, այլև արթնանում են մեր սիրտն ու հոգին:

Այո,՝ գարունը գեղեցիկ է հատկապես, երբ նայում եմ մեր պատուհանից, որտեղից երևացող փոքրիկ ծորակը պատված է զմրուխտ կանաչով, իսկ ծորակով հոսող գետակը վարարել է ձնհալի ջրերից:

Գարնանային ամենագեղեցիկ տեսարանը մեր պատուհանինն է՝ շրջանակի մեջ դրված: Այդ նկարը երեք ամիսը մեկ նոր երանգ է ստանում, որոնցից ամենագեղեցիկը գարունն է:

Լուսինե Առաքելյան

ՈՐՎ ԵՆՔ ՄԵՆՔ

Մեր նախնիները 1828 թվականին գաղթել են Արևմտյան Հայաստանից՝ բնակություն հաստատելով Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում: 1920 թվականից տեղափոխվել և բնակվել են նույն մարզի Գեղարքունիք գյուղում /Բաշքյանդ/: Մեր նախապապը՝ Գրիգորը, ունեցել է 1 որդի՝ Սարգիսը: Սարգիսն ունեցել է 1 որդի՝ Վահանը: Վահանի տղաներն են Սերգոն և Լիպարիտը: Սերգոն ունեցել է 5 որդի՝ Ռուշանը, Մերուժանը, Միշան, Միհրանը և Օնիկը: Ռուշանն ունեցել է 4 որդի՝ Վանիկը, Արժանիկը, Գագիկը և Վարդանը: Վանիկն ունեցել է 1 որդի՝ Թոռնիկը: Թոռնիկն ունեցել է 2 որդի՝ Վանիկը և Վահրամը: Արժանիկն ունեցել է 1 որդի՝ Արծրունը: Արծրունն ունեցել է 1 որդի՝ Արթուրը: Գագիկն ունեցել է 2 որդի՝ Սերգոն և Լիպարիտը: Վարդանն ունեցել է 2 որդի՝ Թաթուլը և Ռուշանը:

Մերուժանն ունեցել է 3 որդի՝ Ձանիկը, Վաչագանը և Անդրանիկը: Ձանիկն ունեցել է 1 որդի՝ Սերգեն: Սերգեն ունեցել է 1 որդի՝ Մերուժանը: Վաչագանն ունեցել է 1 որդի՝ Վարուժանը: Վարուժանն ունեցել է 1 որդի՝ Վահանը: Միշան ունեցել է 1 որդի՝ Արթուրը: Միհրանն ունեցել է 2 որդի՝ Ռուբիկը

և Արայիկը: Ռուբիկն ունեցել է 1 որդի՝ Սարգիսը: Օնիկն ունեցել է 2 որդի՝ Աշոտը և Հակոբը: Աշոտն ունեցել է 1 որդի՝ Մուշեղը /վաղամեռիկ/: Հակոբն ունեցել է 1 որդի՝ Մերուժանը: Լիպարիտն ունեցել է 7 որդի՝ Գառնիկը, Միասնիկը, Սամվելը, Սերյոժան, Սուրիկը, Սարգիսը և Մանվելը:

Գրիգորյանները կրում են Գրիգորյան, Գոքոյան, Վահանյան, Խեչոյան, Մուսեյան ազգանունները:

Նյութի հեղինակ՝
Վանիկ Գրիգորյան

/Հարոյաններ/ Հարոն եկել է Մշո երկրից և բնակություն հաստատել Նոր Բայազետ Գավառի շրջանի Բաշքյանդ գյուղում: Հարոն ունեցել է 1 որդի՝ Ասոն: Ասոն ունեցել է 1 որդի՝ Գյուլաբը: Գյուլաբը ունեցել է 6 որդի՝ Հովհաննեսը, Հայրիկը, Մեհրաբը, Շմոն, Լևոնը և Վանուշը: Հովհաննեսը ունեցել է 4 որդի՝ Մեխակը, Նորիկը, Հեները, Սամվելը: Մեխակը ունեցել է 5 որդի՝ Վարդանը, Լյովան, Ալեքսանը, Արայիկը, Յուրիկը: Վարդանը ունեցել է 2 որդի՝ Ռոմանը և Տիգրանը: Ալեքսանը՝ 1 որդի՝ Արթուրը: Արայիկը՝ 1 որդի՝ Մեխակը: Լյովան և Յուրիկը որդի չեն ունեցել: Նորիկը ժառանգ չի ունեցել: Հեները ունեցել է 3 որդի՝ Արթուրը, Հարութը և Հովհաննեսը: Արթուրը ունեցել է 1 որդի՝ Արմանը: Հարութը ունեցել է 2 որդի՝ Նորայրը և Հրայրը: Հովհաննեսը ունեցել է 1 որդի՝ Հեները:

Սամվելը ունեցել է 3 որդի՝ Կամոն, Մարտինը, Սերժիկը:

Կամոն ունեցել է 3 որդի՝ Սամվելը, Տիգրանը և Գեորգին / Ժորիկը/

Մարտինը 2 որդի՝ Արսեն, Արմեն:

Սերժիկը 2 որդի՝ Մարկը և Դավիթը:

Հայրիկը ունեցել է 5 որդի՝ Ռազմիկը, Վալերը, Վալոդը, Նովլետը և Համլետը:

Ռազմիկը ունեցել է 3 որդի՝ Գրետը, Նորիկը և Վարդանը:

Գրետը ունեցել է երկու որդի՝ Ձիվանը և Շահենը: Նորիկը ունեցել է 3 որդի՝ Սարգիսը, Ռազմիկը և Անդրանիկը, Անդրանիկը՝ 1 որդի՝ Հայկը:

Վարդանը ունեցել է 2 որդի՝ Արմեն և Արման:

Վալերը ունեցել է 1 որդի՝ Հայկ: Հայկը՝ 2 որդի՝ Վալերը և Դավիթը: Վալոդը ունեցել է 1 որդի՝ Արայիկը: Արայիկը՝ 1 որդի՝ Վոլոդյա:

Նովլետը ունեցել է 3 որդի՝ Տիգրանը, Իշխանը և Արամը:

Տիգրանը ունեցել է 2 որդի՝ Արսենը և Կարենը:

Իշխանն ունեցել է 1 որդի՝ Դավիթը: Արամը ունեցել է 3 որդի՝ Գարիկ, Արտյոմ և Արեն:

Համլետն ունեցել է 1 որդի ՝ Արման:

Մեհրաբը ունեցել է 3 որդի ՝ Գառնիկը, Վահանը և Խաչոն: Գառնիկը ունեցել է 3 որդի՝ Վարազդատ, Լյովա և Աշոտ: Վարազդատը ունեցել է 1 որդի՝ Աշոտը: Աշոտը ունեցել է 2 որդի՝ Վարազդատ և Լյովա: Լյովան ունեցել է 1 որդի՝ Մեհրաբը: Մեհրաբը ունեցել 2 որդի՝ Լյովա և Սաշա:

Աշոտը որդի չի ունեցել:

Շմոն ունեցել է 1 որդի՝ Սերյոժը: Սերյոժն ունեցել է 3 որդի՝ Ռոլանդ, Աբուդար և Գևորգ: Ռոլանդը ունեցել է 1 որդի՝ Արման: Աբուդարը ունեցել է 1 որդի՝ Արտակը: Գևորգը ունեցել 1 որդի՝ Սերոժը:

Լևոնը ունեցել է 1 որդի՝ Ռադիկ: Ռադիկը ունեցել է 2 որդի՝ Ձավեն և Վազգեն: Վազգենը ունեցել է 1 որդի՝ Դավիթ: Դավիթն ունեցել է 1 որդի՝ Վազգեն: Ձավենը ունեցել է 3 որդի՝ Ռաֆիկը, Լևոնը և Էդգարը:

Վանուշը ունեցել է 4 որդի՝ Վարդգեսը, Վալոդը , Վաչոն և Մայիսը: Վարդգեսը ունեցել է 1 որդի՝ Վահանը: Վալոդը ունեցել է 2 որդի՝ Էդգար և Ձոհրակ: Վաչոն ունեցել է 3 որդի՝ Արամ, Արայիկ և Սարգիս: Արամը՝ 1 որդի՝ Արսեն: Արայիկը՝ 1 որդի՝ Նարեկ, Սարգիսը՝ 1 որդի՝ Վաչիկ: Մայիսը ունեցել է 1 որդի՝Տիգրան: Տիգրանը ունեցել է 1 որդի՝ Մայիս:

Արփինե Մխիթարյան

4.qxd 26/05/2020 17:10 Page 4

ԻՆՉՊԵՂ ՃԻՇՏ ԸՆՏՐԵԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Եթե ցանկանում եք ունենալ ձեր սիրած մասնագիտությունը, ապա մտածեք այն մասին, թե ինչ կանեիք, եթե անհրաժեշտ չլիներ աշխատել, կամ եթե ունենայիք մեկ միլիոն դոլար, ինչո՞վ կզբաղվեիք:

Այս հարցի պատասխանը այն մասին չէ, թե ինչով դուք պետք է զբաղվեք, բայց կօգնի, որ կարողանաք կողմնորոշվել:

1. Հաշվի՛ առեք ձեր հետաքրքրասիրությունը.

–Եթե դուք ուզում եք դառնալ ճանաչված երաժիշտ, մտածեք կոմպոզիտորի կամ ձայնագրողի մասնագիտության վերաբերյալ.

–Եթե ուզում եք դառնալ դերասան, մտածեք լրատվամիջոցներում աշխատելու մասին, որը ձեզ կօգնի ձեր երազանքին հասնելուն.

– Եթե դուք ուզում եք ճամփորդել ողջ աշխարհում, մտածեք բորտուղեկցորդուհի դառնալու մասին:

2. Հաշվի՛ առեք ձեր սեփական նախասիրությունները.

- Կարելի է առանց դժվարությունների ձեր հոբբին վերածել մասնագիտության: Մտածեք՝ ինչն է ձեզ դուր գալիս, և ինչպես կարելի է այն դարձնել ձեր մասնագիտությունը.

- օրինակ՝ եթե ձեզ դուր են գալիս համակարգչային խաղեր, դուք կարող եք դառնալ դիզայներ համակարգչային խաղերի գծով.

-եթե ձեզ դուր է գալիս նկարչությունը կամ արվեստը, կարելի է դառնալ գրաֆիկական դիզայներ.

-եթե դուք սիրում եք զբաղվել սպորտով, մտածեք այն մասին, որ կարող եք դառնալ մարզիչ:

3. Ենթարկենք փորձաքննության այն առարկաները, որոնք ձեզ դուր են գալիս դպրոցում:

Ուսումնական առարկաները հնարավորություն են տալիս ստանալ այն աշխատանքը, որը ձեր նախընտրելին է մինչև կյանքի վերջ, դրա համար պետք է սովորել բարձրագույն ուսումնական հաստատություններում:

– Եթե ձեզ դուր է գալիս քիմիան, ապագայում դուք կարող եք դառնալ լաբորանտ- դեղագործ.

–Եթե ձեզ դուր է գալիս անգլերենը, մտածեք, որ կարելի է դառնալ անգլերենի ուսուցիչ կամ թարգմանիչ:

–Եթե սիրում եք մաթեմատիկան, կարելի է դառնալ հաշվապահ կամ ուսուցիչ:

-Մտածեք, որ բնագավառում եք դուք առաջնային, որ առարկաներն են ձեզ հեշտ տրվում:

- Վերլուծե՛ք ձեր կարողությունը միջանձնային հարաբերություններում, ինչքանով դուք ունեք մարդկանց հետ հաղորդակցության ունակություն.

-եթե դուք վստահ չեք ձեր ձեռքբերումների մեջ, հարցրեք այդ մասին ծնողներին, հարազատներին, ուսուցիչներին:

-Վերլուծե՛ք ձեր ունակությունը, եթե դուք ուզում եք լինել երջանիկ ու զբաղվել սիրած գործով, հարկավոր է իմանալ ձեր ցանկությունը և զբաղմունքները:

-Վերլուծե՛ք ձեր ֆինանսական դրությունը, բայց մի՛ մտածեք, որ ֆինանսը կարող է պատճառ դառնալ, որ դուք չկարողանաք դառնալ պրոֆեսիոնալ:

Եթե կա ցանկություն ու աշխատասիրություն, ուրեմն կյանքը բաց է ձեր առաջ:

- Վերլուծե՛ք՝ ինչքան կայուն է ապագան՝ մասնագիտությունը: Մասնագիտությունների կարիքը ժամանակի հետ փոփոխական է: Դրա համար պետք է վերլուծվի խորապես՝ հաշվի առնելով հեռանկարները:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ- Մեծամասնության համար պետք են տարիներ, որ գտնեն իրենց կյանքի ուղին: Մի՞ մտածեք, որ դուք կյանքից հետ եք մնում.

-փորձեք լսել ձեր ենթագիտակցությանը.

- հնարավոր է , որ դուք դեռ չեք իմանում, թե ինչ եք նախընտրում, ժամանակ տրամադրեք, որ հասկանաք ձեր ունակությունները.

-Ինչքան լավ դուք ձեզ ճանաչեք, այնքան հեշտ կլինի ճիշտ ընտրությունը:

ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՆՔ

- Զգուշացե՛ք այն աշխատանքից, որտեղ խոսք են տալիս հեշտ ու շատ վաստակել: Հեշտ ճանապարհ լավ ապրելու համար չկա:

-Հեռու՛ մնացեք համացանցային մարկետինգից ու ֆինանսական պիրամիդաներից:

-Եղե՛ք զգույշ արտասահմանում աշխատելուց: Վերլուծե՛ք այդ հիմնավորման գործունեությունը, իմացե՛ք ինֆորմացիա՝ ձեզ կարող են խաբել:

Մենք գիտենք, որ դուք ճիշտ կկողմնորոշվեք, քանի որ շրջանավարտներց է կախված՝ ինչպիսի պետականություն կունենանք վաղը:

Հուսով ենք,որ ձեր օգնությամբ սկիզբ կդրվի հզոր, ազատ Հայաստանի մրցունակ արդյունաբերությանը:

ԻՄ ԵՐԱԶԱՆՔԸ

Երազանքը հոգու քաղցրությունն է, որը երբեք չի դադարում գործել: Երազանքը նաև բաղձալի ապագայի երևակայական պատկերն է, որտեղ իրենց արտահայտությունն են գտնում մարդու ցանկությունները: Բոլոր մարդիկ էլ իրենց կայնքում ունենում են տարբեր երազանքներ: Գուցե ես հենց այս պահին կյանքի այն փուլում եմ, որ պիտի կառուցեմ իմ երազանքի ճանապարհը: Դեպի երազանք տանող ճանապարհը հարթ չի լինում, և ես միայն ուրախ եմ դրա համար, քանի որ գերադասում եմ ինքս հարթել երազանքիս ուղին: Յուրաքանչյուր հաջողակ մարդ իր կյանքը սկսել է երազանքից, ապա այն դարձրել նպատակ և հասել մեծ բարձունքների: Բոլորս էլ ունենք երազանք. մեկը երազում է շքեղ առանձնատուն կամ մեքենա ունենալ, մյուսը՝ լավ աշխատանք, մեկն էլ այն մասին, թե ինչպես կայանա կյանքում: Ես ցանկանում եմ, որ բոլոր մարդկանց երազանքները կատարվեն, և ամեն ոք հասնի իր երազանքին: Երազում եմ՝ ոչ ոք չտառապի երազանքի կարոտից: Բայց իմ բաղձալի երազանքը լավ պատմաբան դառնալն է: Մանկուց եմ երազել պատմաբան դառնալ, քանի որ անսահման սիրում եմ բնօրրանը և իմ ժողովրդին: Ուզում եմ ուսումնասիրել ազգերի պատմությունը, արժեքները, վայրերն ու սովորույթները: Եվ հզոր տերություններին կրկին ապացուցել, որ հայերը աշխարհի ամենահին, ամենարդար, ամենախելացի ժողովուրդն են եղել, կան ու պիտի՛ լինեն: Ես համոզված եմ, որ իմ երազանքը իրականություն կդառնա, որովհետև ես հավատում եմ իմ երազանքի իրականացմանը:

Պետք է միշտ հիշել, որ ապագան պատկանում է նրանց, ովքեր հավատում են իրենց երազանքների գեղեցկությանը՝ այն իրականացնելու ուղիներ փնտրելով:

Քոչարյան Աննա
Ծովազարդ գյուղի միջնակարգ դպրոց
7-րդ դասարան

ԱՆՀԱՆԳԻՍՏ ՏԻԵԶԵՐՔ

Տիեզերքի անբաժանելի մաս են կազմում բակտերիաները: Բակտերիաները կարող են մահանալ այն դեպքում, երբ շրջապատը անբարենպաստ է, կարող է մուտացիայի ենթարկվել, փոխվել՝ կախված միջավայրի պայմաններից:

Պապիկս պատմում է, որ մեր գյուղի տարածքով հոսող գետի մեջ մինչև 80-ական թվականները քարերի արանքում կարելի էր տեսնել կարմրախայտ ձկների: Ես հասկանում եմ, որ երբ ջուր չկա, ձուկը չի ապրի, իսկ ջուր չկա, քանի որ մենք պատասխանատվություն չենք կրում, այլ միայն անխնա օգտագործում ենք եղածը:

Փորձեցի հասկանալ՝ ինչ է նշանակում ապրել առանց պատասխանատվության բնության, տիեզերքի հանդեպ, ապրել միայն շռայլելով. ինձ թվում է՝ դա նման է այն երևույթին, երբ հարևանից վերցնես պարտքով ձու և չվերադարձնես, կամ էլ առանց ասելու վերցնես այդ ձուն: Մեր հարևանը այդ դեպքում մի քանի ձու գլխովս կտար: Ինձ թվում է՝ բնությունը իր բազմատեսակ ահազանգերով մեզ ուզում է զգուշացնել, որ մենք՝ ապրողներս, շատ ենք շեղվել մեր ճանապարհից և շուտափույթ պետք է անենք անհրաժեշտ հետևություններ:

Շատ լավ է՝ հայրս դեռ տանն է՝ արտագնա աշխատանքի չի կարողանում գնալ. ճանապարհները փակ են: Մենք հաճախ ենք դաշտ գնում իրար հետ: Ես որոշեցի կիսվել ինձ հուզող հարցերով, հայրս լռեց, հետո մենք շարունակեցինք մեր ճանապարհը, կարծես նա ինձ չէր էլ լսում, բայց զգում էի, որ մտահոգ է: Ես կարծում եմ, որ բնության համար ոչ մի տարբերություն չկա, թե կենդանական աշխարհի որ ներկայացուցիչն է ապրում, որ դոմինանտն է երկրագնդի վրա, մեր բոլոր պարտականությունները և նպատակը մեկը պետք է լինեն՝ ապահովել վերարտադրության ընթացքն աշխարհում:

Մեր բոլոր հարևանները շոկի մեջ են, թե ինչ են անելու առանց արտագնա աշխատանքի: Տատս կատակով ասում է, որ եթե այսպես շարունակվի, կանայք տղամարդկանց կուտեն...

Այսօր շատ լավ, արևոտ օր է: Գյուղացիները գյուղից էլ տեղ չեն գնում, արտակարգ իրավիճակ է՝ նստած են տանը:

Ճաշի ժամանակ հայրս ասաց, որ ինքն արդեն որոշել է՝ ինչ պիտի անի սրանից հետո: Ես ուշադիր նայեցի բոլորի երեսին, պապիս և տատիս դեմքին ուրախության շողք երևաց, մայրս այդքան էլ ուրախ չէր, ես էլ դեռ չէի հասկանում, թե խոսքը ինչի մասին էր: Չդիմացա և խառնվեցի մեծերի խոսակցությանը, քանի դեռ այն չէր գնացել ուրիշ հունով, որ հասկանայի իրադրությունը:

- Իսկ ի՞նչ պետք է անենք, պա՜պ.

Հայրս ասաց, որ ինչքան փող մնացել է, պետք է գործի մեջ դնել՝ գնել շինարարական հումք, որպեսզի կառուցենք ջերմոց, որը տարվա մեջ մի քանի անգամ բերք կտա, այն կվաճառենք և եկամուտ կստանանք, կարելի է նաև ծառեր տնկել և, ինչու չէ, նաև մեր ավանդական կարտոֆիլաբուծությամբ զբաղվել:

Բոլորիս այդ միտքը շատ դուր եկավ: Հաջորդ օրը ուրախ զբաղվում էինք մեր գործերով, բայց, միևնույն է, մայրս այդքան էլ ուրախ չէր. երևի կմեծանամ, կհասկանամ:

Մենք պետք է հասկանանք, որ այդ երևույթը միշտ եղել է՝ տարբեր աստիճանի բարդություններով՝ աստիճանաբար տարեցտարի բերելով նոր սրացումներ. անպայման պետք է պահպանել հիգիենայի կանոնները, մարդկանց հետ շփվելու քիչ հավանականությունը, մինչև որ վիրուսաբանները գտնեն Կորոնավիրոսը կանխարգելող կամ բուժող դեղամիջոցները: Շատ գիտնականներ, քաղաքական ուժեր, պաշտոնյաներ, մարդիկ ի հայտ են բերել տարբեր հավաստի փաստեր: Այդ հարցում միայն պետք է լսել համաշխարհային բժշկական կազմակերպությունների տվյալները:

Հարգելի՜ ընթերցողներ, եթե դուք կամ ձեր ընտանիքը ունի հոգեբանական օգնության կարիք, գրե՛ք մեզ, և մեզ հետ համագործակցող հոգեբանները կպատասխանեն ձեր հարցերին:

/roza.hakobyan.1975@mail.ru/

«1+1»թերթի խմբագրություն

4.qxd 26/05/2020 17:10 Page 5

ԵԹԵ ԵՍ ԼԻՆԵԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Ես շատ անգամ եմ լսել, երբ ծնողները իրենց երազանքները ձգտում են կատարված տեսնել իրենց երեխաների միջոցով: Երեխան սիրում է նվագել թե չէ, մայրը աղջկան տանում է դաշնամուրի, իսկ տղային՝ ակորդեոնի:Դա մայրիկների և հայրիկների իրավիճակային երազանքն է: Դրա համար էլ չունենք լավ մասնագիտացված երաժիշտներ՝ չհաշված մեր մի քանի ազգային տաղանդներին:

Իմ հայրն ունի բռնկուն բնավորություն, մայրս այդքան էլ չի զիջում հորս: Այդ է պատճառը, որ նրանք անընդհատ վիճում են, և յուրաքանչյուրը իր տեսակետն է ուզում առաջ տանել: Իմ ուսման հարցը նույնպես նրանք են որոշում, հայրս ուզում է, որ ես դառնամ ոստիկան, իսկ մայրս՝ ծրագրավորող, չեմ խոսում նաև տատիս ու պապիս մասին, գոնե մի բան լավ է՝ նրանք չեն վիճում:

Իսկ ինձ միշտ դուր է եկել մարդկանց հետ շփումը, կազմակերպչական աշխատանքներ տանելը, ուրիշների մասին հոգալը: Դպրոցում սիրում եմ զբաղվել հասարակական աշխատանքներով: Հենց որ տանը կամ փողոցում մարդիկ դժգոհում են այս կամ այն պետական կամ հասարակական մարմինների աշխատանքից, ես մտովի ինձ պատկերացնում եմ այդ պաշտոնյայի տեղը և փորձում այդ հարցերը կազմակերպել, բայց, ճիշտն ասած, միշտ չէ, որ ստացվում է: Ես երբեմն որսում եմ այն միտքս, որ ինձ արդեն պատասխանատու եմ համարում այն բանի համար, ինչը որ ինձ շրջապատում է: Հնարավոր է՝ համեստ չի հնչում, որ ասեմ՝ ինձ դա դուր է գալիս, և ես ուզում եմ դառնալ վարչապետ:

Հենց որ տանը հորս ասացի այդ մասին, բայց մտավախություն ունեի, որ նա դեմ կլինի իմ որոշմանը, հայրս շատ ուրախացավ իմ վճռականության համար: Մենք որոշեցինք՝ դեռ ոչ մեկի այդ մասին չասել, այդ որոշումից հետո ես ինձ զգացի ավելի պատասխանատու մեր գյուղի, հայրենիքի հանդեպ: Ինձ շատ է դուր գալիս մեր վարչապետ պարոն Փաշինյանը՝ իր հռետորաբանությամբ, դրության մեջ կողմնորոշվելով, որը ինձ համար դեռ անհասանելի է:

Բայց եթե ես լինեի վարչապետ..

1.Կկատարեի մեր գյուղի մեծերի ցանկությունը. բոլոր վարելահողերը կմշակեի, իսկ եթե մեկը չի ուզում մշակել իր հողը, թող հարևանը կամ բարեկամը մշակի, իսկ եթե նրանք էլ չեն ուզում, թող մեկ այլ գյուղացի ցանի:

2. Կկարգադրեի, որ կրթության նախարարը իր երեխաների հետ մի օր ձմռանը մեր դպրոց գար, ես հուսով եմ, որ դրանից հետո ավելի արագ կկազմակերպվեին այնպիսի միջոցառումներ, որից հետո դպրոցը ավելի հարմարավետ կլիներ սովորելու համար:

3.Կուզենայի, որ փակվեին Ռուսաստան տանող ճանապարհները և կապը օդով, որ հայ հայրերը մնային և աշխատեին իրենց հողի վրա և իրենց տղաներին դաստիարակեին որպես հայ տղամարդ:

Ես իմ կողմից խոսք եմ տալիս ման գալ մեկ վերնաշապիկով, որպեսզի իմ ներդրումն ունենամ մեր ընտանեկան բյուջեում:

Պապս իմ այս զգացմունքային խոսքին պատասխանում է, որ ո՞չ ուտելու հաց կունենանք, ո՞չ վառելիք, ու թուրքերն էլ մի օրվա մեջ մեզ կվերացնեն: Ես, իհարկե, պապիս հետ չեմ վիճում, բայց այն կարծիքին եմ, որ մենք ապրել ենք առանց հյուսիսի մի քանի հազար տարի ու էլի կապրենք, իսկ ինչ վերաբերում է թուրքերին, ես համոզված եմ, որ մենք պետք է բարեկամություն ունենանք մեզ հարգող պետությունների հետ և կատաղաբար կռվենք մեր թշնամիների դեմ, այդ դեպքում մեզ կհարգեն թե՞ բարեկամները և թե՞ թշնամիները:

4.Կկարգադրեի, որ մեր պետության կաշառակերներին ուղարկեն մեր գյուղ ապրելու, մենք լեռնեցի, ավանդապաշտ մարդիկ ենք, մենք, հորից-տղային-աղջկան փոխանցելով մեր արժեքները, հիշում ենք՝ ով ենք մենք եղել դարերով, ինչ լավ կամ վատ արարք ենք գործել: Երբ կաշառակերները հասկանան, որ իրենց սերունդները ապրելու են արհամարհանքի ու հեգնանքի մթնոլորտում, մյուսները այդ ցանկությունը չեն ունենա:

Պապիկս ասում է, որ փոխադարձ հարգանք և վստահություն է պետք առաջնորդների հանդեպ, և համոզված է, որ ամեն մի գյուղ պետք է ունենա իր առաջնորդը, և առաջնորդին պետք է դաստիարակել, դա կարող է լինել այն մթնոլորտում, որտեղ կա փոխադարձ հարգանք և հիերարխիա մարդկանց միջև:

Ինձ թվում է, որ դա շատ բարդ է ինձ համար, մի գուցե վաղը երազեմ, որ միշտ դպրոցական մնամ...

«1+1»թերթի խմբագրություն

ԻՆՉ Է ՎԱԽԸ

Վախը սև շուքի նման ուղորդում է մարդկությանը, փոխվում են միայն նրա սյուժեները: Քիչ ենք վախենում սատանաներից և ուրվականներից, բայց նրանց տեղը կզբաղեցնեն զոմբիները և այլմոլորակայինները:

Վայներ եղբայրները իրենց «Դեղը վախի դեմ» պատմության մեջ գրել են. «Մենք բոլորս նախատրամադրված ենք այդ հիվանդությանը, դա մեր նախահայրերի բնական ռեակցիան է մեզ շրջապատող միջավայրին: Մենք կրում ենք դա մեր գեների մեջ: Բայց մեկը պայքարում է վախի դեմ ամբողջ կյանքում և հաղթում է, իսկ մյուսը հանձնվում է նրան միանգամից կամ էլ աստիճանաբար: Մարդկությունը անսահման հարուստ է, հիանալի և իմաստուն է, բայց խանգարում է նրան լինել երջանիկ միայն «վախը»»:

Վախի գաղափարը մեր կյանքի վրա ավելի մեծ ազդեցություն ունի, քան մեզ թվում է:

Մենք բոլորս ապրում ենք այդ վիրուսով, միայն թե մեկի մոտ այդ հիվանդությունը ակնհայտորեն անցնում է, իսկ մյուսը նոր պետք է վարակվի: Դրա համար ես ուզում եմ ձեզ հետ խոսել այդ երևույթի մասին, որպեսզի ազատենք մեր գիտակցությունը այդ վախից, որը խանգարում է մեզ՝ ապրել երջանիկ:

Կարելի է նշել վախի մի քանի հիմնական ձևեր: Յուրաքանչյուր դասակարգում ունի իր առավելությունը և թերությունները: Ուղղակի ցուցակագրելը հետաքրքրություն չի ներկայացնում, բայց պետք է բացահայտել՝ ինչի հետևանքով է դա ընթանում, և ինչպես դրանից ազատվել. դա երևի ավելի առաջնային է այն մարդու համար, ով տառապում է վախով:

Օրինակ՝Կլաուստրոֆոբի- դա վախն է փակ տարածքում, լինում է և հակառակը, կան մարդիկ, ովքեր վախենում են բաց տարածքից:

Այդ հիվանդությունը ծանր դեպքերում կարող է մարդուն հասցնել նրան, որ մարդը ամբողջ օրը

նստի տանը: Մեզնից շատերը վախենում են բարձրությունից, բայց մի քանիսի համար դա մահաբեր երևույթ է: Սոցիաֆոբիա՝ դա վախ է հանրության առաջ ներկայանալուց: Նուզաֆոբիան՝ դա ինչ- որ հիվանդությամբ հիվանդանալու վախն է: Վախի այդ տեսակը այս կամ այն ձևով հասարակության մեջ ներկա է: Բայց հիմնականում սրվում է և տարածվում հասարակության մոտ էպիդեմիաների ժամանակ: Վախը փակվում է սրտի մեջ, մարդը իրեն զգում է թույլ և էլ չի պայքարում այդ հիվանդության դեմ, որն էլ նվազեցնում է լավատեսության և դրական տրամադրվածության ռիսկերը վիրուսային հիվանդության դեմ: Բայց, միևնույն է, անհապաղ պետք է կատարել համաշխարհային բժշկական կազմակերպության առաջարկները:

Վախը որոշ դեպքերում կառուցողական է՝ ներկայացնելով բնական պաշտպանողական մեխանիզմ, որը օգնում է ավելի լավ համակերպվել էքստրեմալ վիճակներում: Գիտնականները պարզել են, որ ոչ միայն մեր գիտակցությունը,այլև մեր մարմինն է պատասխանում ծայրահեղ դեպքերում:

Վախը կարող է բերել սրտի ռիթմի խանգարման, մարմինը քրտնում է, նպաստում է աղիքա-ստամոքսային տրակտի խանգարմանը, ազդում է շնչառական համակարգի վրա՝ պատճառելով օդի պակասության զգացում և այլն:

Ընդհանրապես պետք է նշել, որ կապը վախի և ներքին օրգանների հետ բազմազան և երկիմաստ է: Մի կողմից՝ վախը և անհանգիստ վիճակը բերում են ներքին օրգանների վատ աշխատանքի, իսկ մյուս կողմից՝ ներքին օրգանների վատ աշխատանքը կարող է բերել վախի:

Ամերիկացի հոգեբան Ուիլյամ Ջեյմսը առաջարկեց հիպոթեզ, որ մեր զգացմունքները ծնվում են ոչ թե մեր ուղեղում, այլ մեր օրգանիզմի ծայրամասերում: Այդ հիպոթեզի համաձայն՝ արտաքին շրջապատը, ազդելով օրգանիզմի վրա, բերում է ինչ- որ փոփոխությունների, որի հիման վրա մեր ուղեղը այդ երևույթին տալիս է իր անունը:

Նա ասում է, որ մենք երջանիկ ենք , երբ ծիծաղում ենք, տխրում ենք, երբ լացում ենք, վախենում ենք, քանի որ դողում ենք:

Այդպիսի հայտարարությունը առաջին հայացքից թվում է անխոհեմ , բայց այդ հիպոթեզը ունի համոզիչ հաստատումներ կյանքից:

Չե՞ք հավատում, այդ դեպքում ձեր երեսին փորձեք պատկերել ծիծաղ, և միաժամանակ մտածեք ինչ -որ վախենալու բանի մասին, հետո գնահատեք ձեր վիճակը: Երաշխավորում եմ՝ ձեր վախը կլինի ավելի քիչ սովորականից, քանի որ մեր մարմինը չի կարող վախենալ և ծիծաղել միաժամանակ: Երկու հակառակ զգացմունքները չեզոքացնում են միմյանց:

Մանուշակ Թովմասյան
Հոգեբան խորհրդատու

ԵՐԱԶԱՆՔԻ ՆՈՏԱՆԵՐ

Բոլորս էլ ունենք երազանքներ, և յուրաքանչյուրս երազումենք ինչ-որ բանի մասին, ապրում այդ երազանքներով ու պատկերացումներով: Եվ երբ սկսում ենք անընդհատ մտածել դրանց մասին, սրտանց ցանկանում ենք և հավատում, որ կկատարվեն: Երբ երազանքները կատարվում են, փոխում են մեր կյանքը, փոխում են մեզ: Երազանքները մեծ նշանակություն ունեն մարդու կյանքում: Դրանք բազմաթիվ գույներով են լցնում մեր կյանքը, մեզ երջանկություն պարգևում: Երազանքները լինում են տարբեր՝ մեծ և փոքր, հնարավոր և անհնարին: Ես ցանկանում եմ, որ բոլոր մարդկանց երազանքները կատարվեն, և ոչ ոք տխուր չլինի: Ես ունեմ շատ երազանքներ: Երազում եմ, որ երբեք չճաշակեմ կարոտի համը: Երազում եմ, որ իմ սիրելի մարդիկ միշտ իմ կողքին լինեն և, իհարկե, երազում եմ լավ մարդ լինել: Ես կարծում եմ, որ այս երազանքները բոլորը ունեն, բայց իմ ամենանվիրական երազանքն այն է, որ ես դառնամ դաշնակահարուհի:

Դաշնակահարուհի դառնալը իմ մանկության երազանքն է: Ես իմ երազանքը ի կատար ածելու ուղին գրեթե գտել եմ: Հիմա հաճախում եմ դաշնամուրի և ամեն ինչ անում եմ, որ կարողանամ հասնել իմ երազանքին և հանդես գալ մեծ բեմերում: Յուրաքանչյուրս էլ կարող ենք իրականացնել մեր երազանքները՝ հավատալով այդ երազանքին և փորձելով հասնել դրան:

Ղարիբյան Սյուզի
Ծովազարդ գյուղի միջնակարգ դպրոց
7-րդ դասարան

ԱՐՏԱՍՈՎՈՐ ԳԱՐՈՒՆ

Իմ հայրենի լեռնաշխարհում ամեն անգամ գարունը գալիս է մաքառելով: Այո՜, մաքառելով: Մեծ դժվարությամբ են տեղի տալիս սառնամանիքները , ձյունն ու անձրևները: Սակայն, ի վերջո, գալիս է չքնաղ գարունը՝ հարսնաբույր բողբոջների պայթյունով, ծիծաղկոտ վտակների խոխոջյունով, արևի բեկբեկուն շողերի խաղով..

Այս տարվա գարունը այլ էր: Այս տարվա գարունը այլ «կռիվ ուներ տալու»:

Մարդ արարածը իր դժոխային գործունեությամբ սպառնում է ոչնչացնել Երկիր մոլորակի բնականոն կյանքը, բացվող գարունների ծաղկափթիթ ծնունդը: Քիմիական տարրերով աղտոտվել են օդը, հողը, ջուրը: Այս ամեն մարդու՝ հարստանալու անհագ տենչի արդյունքն է: Ընչաքաղց մարդը չի գիտակցում, որ կորցրել է և, որ ամենակարևորն է, երջանիկ լինելու արվեստը: Նա փնտրում է հաճույքներ, բայց ո՞չ երջանկություն ու սեր, դեղորայք, բայց ո՞չ առողջություն ու առողջ ապրելակերպ, շքեղ տուն, բայց ո՞չ ընտանիք: Նրա բոլոր սխալների համար հատուցում է Մայր բնությունը:

Իսկ այսօր խաթարված բնության համար հատուցում է մարդը: Մարդաշատ քաղաքների ամայացած փողոցների ասֆալտների ճեղքերից հառնում են գարնան ավետաբեր ծաղիկները: Նորից գարունը մաքառում է, մաքառում է Մայր բնությունը: Մաքառում է և մարդը՝ մարդանալու ճանապարհը բռնելով:

Ես հավատում եմ նրանց հաղթանակին:

Անժելա Հակոբյան
Լանջաղբյուրի միջն. դպրոց

4.qxd 26/05/2020 17:10 Page 6

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՄԵՆՔ

Ամբողջ աշխարհը մտահոգված է Կորոնավիրուսի պատճառով, տանը մնալու պատճառով ես շատ եմ կարոտում մեր դպրոցը, իմ ուսուցիչներին, դասընկերներիս: Երազում եմ այն օրվա մասին, երբ Կորոնավիրուսը կոչնչանա, և մենք նորից կանցնենք մեր նախկին առօրյային: Ճիշտ է, հեռավար ուսուցման շնորհիվ մենք սովորում ենք մեր դասերը, սակայն ամեն անգամ, երբ լսում եմ ուսուցչուհուս հուսադրող, ականջիս հաճելի դարձած ձայնը, բայց միաժամանակ չեմ կարողանում թաքցնել հուզմունքս, որ չեմ կարողանում տեսնել նրա գեղեցիկ քայլվածքը, ինձ շոյող նրա քնքուշ ձեռքերը... Այժմ էլ՝ այս տողերը գրելիս, կոկորդս կրկին սեղմվում է հուզմունքից, և արցունքներս չեմ կարողանում թաքցնել: Հեռավար ուսուցման միջոցով մենք կարողացանք արժևորել միմյանց հետ անմիջական, ֆիզիկական շփման կարևորությունը՝ մտերմիկ զրույցները, խաղերը, չարաճճիությունները, դասերի զանգերը, դասամիջոցների խաղերը, դասերից հետո զրուցելով և կատակելով տուն գնալը:

Հեռավար ուսուցման դրական կողմը իմ կարծիքով այն է, որ մենք կարողացանք ավելի լավ օգտվել համացանցի հնարավորություններից:

Իսկ ինչ վերաբերում է հայրիկիս տանը մնալուն, կասեմ, որ ուղղակի երջանիկ եմ: Ճիշտ է, հայրիկս փորձում է թաքցնել իր մտահոգությունները, բայց ես նկատում և փորձում եմ թոթափել նրա մտորումները: Ես հասկանում եմ, որ նրա մտահոգության պատճառը ֆինանսական խնդիրներն են, որոնց հիմնական աղբյուրը արտերկրից է գալիս: Այնուամենայնիվ, ես պատրաստ եմ բավարարվել քչով, միայն թե հայրիկս կողքիս լինի, իսկ այս չարաբաստիկ վիրուսը վերջապես վերանա ողջ աշխարհից:

Լուիզա Մադոյան
4-րդ դասարան
Լանջաղբյուրի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց

ՆԿԱՐԻ ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայտարարություն

Հորդորում ենք բոլորին՝ ցանկացած առևտրական գործարք կատարելիս պահանջե՞ք ձեր հասանելիք կտրոնները, որպեսզի մեր պետական բյուջեն միշտ համալրված լինի, և այդ միջոցները կառավարությունը կարողանա ուղղորդել բանակին՝ թե՞ զինվորի կարիքները և թե՞ զենք -զինամթերք ապահովելու համար:

«1+1» դպրոցական թերթի խմբագրությունը անցկացնում է մրցույթ կարճամետրաժ հետաքրքիր տեսաֆիլմերից /1 րոպե տևողությամբ/՝ «դու ինքդ ռեժիսոր ես» խորագրով: Տեսագրված ֆիլմերը կարող եք ուղարկել
zgorsever@gmail.com հասցեին

Հարգելի՝ համագյուղացիներ, Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթին տրված ձեր հարցազրույցները մեր դպրոցականների համար ինքնահաստատման դաս են, որով մեր երեխաները ձեր կողմից տրված նյութերը շարադրում են իրենց հայացքների և ընկալումների շրջանակում, ավելի համառոտ ձևով: Մենք ներողություն ենք խնդրում, եթե չենք մանրամասնում այն, ինչի մասին մանրամասն խոսել եք դուք:
Հարգանքով՝ Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթի խմբագրություն:

6
«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1
Փոստային դասիչ՝ 1207
Թողարկման օրը՝ 27. 04. 2020 թ. - 27.05.2020 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝ Ռոզա Հակոբյան
Տպաքանակը՝ 500
Հեռախոս՝ 093919658:
էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru
Կայք էջ՝ 1եւ1.հայ